

Ընդդիմախոսական կարծիք

Սոսե Փարթուղի Բողոզյանի՝ «Նոր Ջուղայի գրական-մշակութային կյանքը 17-18-րդ դարերում» Ժ.01.01-«Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Գաղթօջախների ձևավորման, զարգացման, մշակութային կյանքի ուսումնասիրությունն առանձնահատուկ նշանակություն ունի: Այն հնարավորություն է տալիս գնահատելու գաղթօջախի դերը տվյալ երկրի հասարակական-քաղաքական, առևտրատնտեսական, մշակութային կյանքի զարգացման գործում, բացահայտում է գրական-մշակութային փոխազդեցությունները, դառնում է Հայաստանի պատմության մի էջի տարեգրությունը:

Սոսե Բողոզյանի ատենախոսությունը կարևորվում է նախ և առաջ այս համատեքստում: Նոր Ջուղայում տպագրած «Գիրք տումարաց որ էւ Պարգատումար կոչի» գործի հիշատակարանում Հովհաննես Ջուղայեցին գրում է, որ Բտալիայից տպարանը մեծ դժվարությամբ Հայաստան է փոխադրել: Նոր Ջուղան Հայաստան անվանելը վկայում է գաղթօջախն իբրև հայրենիքի մաս, հայրենիք ընկալելու մասին:

Վստահաբար, Սոսե Բողոզյանն ինքն էլ ունի այս գիտակցումը. աշխատանքը, որի առարկան XVII դ. սկզբին տգիտության խավարում զարթոնքի կենտրոն դարձած Նոր Ջուղան էր, կատարված է ոչ միայն գիտական պատասխանատվությամբ, այլև մեծ սիրով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, բառացանկից, օգտագործված գրականության ցանկից: Մեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Անհրաժեշտ քանակությամբ հրապարակումներում արտացոլված են ատենախոսության հիմնադրույթները: Ատենախոսը, հստակեցնելով իր հետազոտության առարկան, նշելով արդիականությունը, գիտական նորույթը, ընտրված մեթոդաբանությունը, սահմանելով նպատակներն ու խնդիրները, ձևավորվել է աշխատանքի հիմնավորված կառուցվածք:

Հասկանալի է, որ հետազոտության նյութի շրջանակում ուսումնասիրվում են պակաս ուշադրության արժանացած հեղինակներ:

Գնահատելի է կատարված ձեռագրագիտական աշխատանքը, որի շնորհիվ վերծանվում են Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով» մատյանում հանդիպած չափածո գործերը: Ձեռագրագիտական, գրականագիտական, պատմագիտական վերլուծություններն ստեղծում են Նոր Ջուղայի գրական-մշակութային կյանքի համայնապատկերը 17-18-րդ դարերում:

Նախ՝ սոցիալ-քաղաքական, պատմական գործոնների համառոտ լուսաբանմամբ ատենախոսության մեջ մատնանշվում են աշխարհաքաղաքական նոր միջավայրում գաղթահայության հոգևոր կեցության տեղաշարժերի նախադրյալները: Հանգամանալից անդրադարձ է կատարվում Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքին, նրա՝ հոգևոր դաստիարակության հետ խոր և բազմակողմանի գիտելիքներ տված դպրոց-համալսարանին, տպարանին: Արդյունքում ձևավորվում է ընդհանրական հայացք գաղթօջախի միասնական, նպատակային գործունեության վերաբերյալ՝ եկեղեցի-դպրոց-տպարան միաձույլ կենտրոնի և վաճառականության միջև իրականացվող համագործակցությամբ. հոգևոր-մշակութային կյանք վարող Նոր Ջուղան նաև առևտրական ցանցի կենտրոնն էր:

Կոստանդ Ջուղայեցու վաճառականական, մանկավարժական գործունեության և գրական ժառանգության քննությունը տարվում է ժողովրդի լուսավորության, մտավոր վերածնության գործին նվիրված գործչի նկարագրի ուրվագծմամբ:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է Նոր Ջուղայի հայ աշուղական դպրոցին: Ատենախոսը կատարում է համակողմանի քննություն: Վերլուծության են ենթարկվում աշուղական երգերի թեմատիկան, արձարձված մոտիվները, զուգահեռներ են տարվում նույն ժամանակաշրջանի հայ բանաստեղծների տաղերի հետ, ցույց են տրվում ստեղծագործություններում առկա արևելյան բանաստեղծության պատկերային կադապարները և դրանցով հանդերձ՝ այդ երգերի ինքնատիպությունը՝ պայմանավորված հայ մարդու ներաշխարհով, հոգեբանությամբ, աշխարհայացքով, շեշտվում է աշուղական արվեստի նշանակությունը մարդկային արժեհամակարգը բարեփոխելու գործում: Նոր մեկնությունների հնարավորություն են ստեղծում «աշուղ» բառի ստուգաբանության շուրջ կատարված դիտարկումները օտարալեզու

աղբյուրների հենքի վրա, ներշնչանք-սագ-երգ-երգիչ-լույս շարքը կազմող բառերն «աշուղ»-ի դասական սահմանման եզրույթներ համարելը աշուղ-ստեղծագործական ծիսակարգ կատարող կերպարային գուգահեռում:

Հաջողված է նաև ատենախոսության երրորդ գլուխը: Այն, անշուշտ, գրված է ընդգծված վերաբերմունքով՝ կարևորելու իրանահայ բանաստեղծության և պատմագրության երկու քիչ ուսումնասիրված, բայց, ատենախոսի բնորոշմամբ՝ հայ գրականության, հայ մշակույթի պատմության համար «բացառիկ» աղբյուրներ հանդիսացող հեղինակների գործերը, որոնք հնարավորություն են տալիս ճանաչելու 17-18-րդ դարերի Պարսկաստանի քաղաքական ու գաղափարական մթնոլորտը, առավել լայն պատկերացում կազմելու հայ-պարսկական մշակութային կապերի մասին: Ատենախոսն իրավացիորեն այդ ժառանգությունը գնահատում է նաև հայ բարբառագիտության տեսանկյունից: Այս գլխում ևս ատենախոսը ցուցաբերել է վերլուծության համալիր մոտեցում՝ անդրադառնալով հեղինակների կենսագրությանը, գրական ժառանգության ժանրային համակարգին, պատկերավորման-արտահայտչական միջոցներին, հեղինակների աշխարհայացքին, լեզվամտածողությանը:

Ստեփանոս Դաշտեցու և Ստեփանոս Երեցի ստեղծագործությունները դիտարկվում են ուսուցողական, բարոյակրթական, խրատական, հայրենասիրական միտումների նույն համատեքստում, ինչ տեսանելի էր ատենախոսության նախորդ գլուխներում:

Մի նկատառում միայն: Համեմատական քննությունը, որ տարվում է Ստ. Դաշտեցու «Մեղու» և Ն. Շնորհալու «Կրիա» հանելուկների միջև, հաջող օրինակ է: Կարծում ենք, սակայն, գուգահեռն առավել կշահեր, եթե Դաշտեցու հանելուկը համեմատվեր Շնորհալու՝ մեղվին նվիրված հանելուկների հետ, որոնցում բանաստեղծական պատկերները նաև այլաբանական ենթատեքստ ունեն:

Ընկալելի չէ ատենախոսության մեջ Շնորհալու հանելուկներն աշխարհաբար փոխադրությամբ ներկայացնելը:

Ատենախոսության վերաբերյալ որոշ դիտարկումներ ևս:

Բոլոր հետազոտությունների մեջ «Ատենի ժամագրքի» տպագրման տարեթիվ հիշատակվում է 1642 թվականը: Ատենախոսը տպագրության տարեթիվ է նշում 1641 թվականը (էջ 20):

Վ. Դերիկյանը «Պարզատումար»-ի տպագրության տարեթիվ է նշում 1647 թվականը («Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում: Մասն Բ: Լվովից Ամստերդամ (17-րդ դար), Երևան, Զանգակ-97», ՄՊԸ, 2014, էջ 318, 326), ատենախոսը՝ 1650 թվականը (էջ 21):

Հայտնի է, որ «Աստուածաշունչ»-ի տպագրությունը անավարտ է մնացել, պահպանվել է միայն 4 էջ, իսկ «Պողոսի թուղթ»-ի մասին միայն հիշատակություններ են եղել (Դերիկյան Վ., նույն տեղում, էջ 323): Ատենախոսության մեջ գրված է, որ մեծ դժվարությամբ, բայց տպագրվել են այդ գրքերը (էջ 21):

Ատենախոսն, անշուշտ, ծանոթ է բոլոր հետազոտություններին, նրանցով հիմնավորում, վերահաստատում է իր տեսակետները: Այս հարցերի շրջանակում ճշտումներ կամ պարզաբանումներ տրված չեն:

Ներկայացնելով, որ Ստեփանոս Երեցը գրել է նաև հանելուկներ, բերվում է 1 օրինակ (էջ 117): «Յովսէփ» խորագրով այդ հանելուկն Աս. Մնացականյանի «Հայ միջնադարյան հանելուկներ» գրքում ներկայացվում է Ն. Շնորհալու անունով՝ ձեռագիր աղբյուրների հենքի վրա: Բացի այդ, հանելուկը լեզվաոճական առանձնահատկություններով և թեմատիկայով հարազատ է Շնորհալու գրչին և լիովին ներառվում է Ն. Շնորհալու՝ սուրբգրային թեմաներով հանելուկների շարքում՝ նվիրված Հին կտակարանի հերոսներին:

Ատենախոսը երրորդ գլխում նշում է, որ Շնորհալուց հետո հանելուկների ժանրը բավական ժամանակ մոռացության է մատնվել և երկար ընդմիջումից հետո Ստ. Դաշտեցին է անդրադարձել այդ ժանրին (էջ 106, էջ 126): Տպավորություն է ստեղծվում, որ Շնորհալուց հետո հանելուկագիրներ չեն եղել, մինչդեռ մեզ է հասել հանելուկների ավելի քան 18 շարք՝ գրված XIII-XVIII դարերում:

Ատենախոսության մեջ հանդիպում են վրիպակներ, նույն բառերի գրության տարբեր ձևեր, երբեմն՝ ոչ ճիշտ՝ Ս. Ամենափրկիչ Վանք (էջ 16, 17, 24), Ս. Ամենափրկիչ վանք (էջ 18, 19), Պետրոս Դի Սարգիս Գիլանենց, Պետրոս դի Սարգիս Գիլանենց (էջ 112), անհաջող շարադրման հետևանքով առաջացած որոշ ձևակերպումներ՝ «Գիրքը,

ինչպես վերնագիրն է հուշում, խրատական երկ է և որպես միջնադարյան ժանրի օրինակ՝ ունի գեղարվեստական առանձնահատկություններ» (էջ 33), կամ՝ «Դրանցից առաջինը «Հարցմունք և պատասխանի» վերնագրով բարոյախրատական արձակ մի երկ է, որը նույնպես գրված է միջնադարյան գրականության մեջ տարածված հարցուպատասխանի ժանրով» (էջ 35):


Առաջարկում ենք ատենախոսին աշխատանքը տպագրելիս հաշվի առնել մեր նկատումները:

Այսպիսով՝ Սոսե Բողոզյանը կարողացել է ներկայացնել թեկնածուական ատենախոսության պարագայում տրամաբանված ամբողջական հետազոտություն՝ օգտագործելով ձեռագիր և տպագիր աղբյուրներ, ուսումնասիրվող նյութին առնչվող աշխատություններ: Ատենախոսությունը համապատասխանում է Ժ.01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականության» թվանիշին, բավարարում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջները, ուստի միջնորդում ենք Երևանի պետական համալսարանում գործող՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Գրականագիտություն 012» մասնագիտական խորհրդին՝ Սոսե Փարթուղի Բողոզյանին շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:



Հերիքնագ Ռոսկանյան
բանասիրական գիտությունների թեկնածու

Բ.գ.թ. Հ. Ռոսկանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական գծով
փոխտնօրեն՝  Մ. Սարգսյան

03.05.2024թ.